ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/299

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Մասնակից՝ «Կանիֆարմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19764-2020 գրությամբ «Կանիֆարմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.12.2020թ.-ի թիվ ԱԹ/06.3/28777-2020 գրության հիման վրա, 29.12.2020թ.-ին «Կանիֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 29.12.2020թ.-ին:

29.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/299 համարի ծածկագիրը:

20.01.2021թ.-ին 27.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.01.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.**

ՀՀ առողջապահության նախարարությունը 26.12.2020թ.-ի թիվ ԱԹ/06.3/28777-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ Առողջապահության նախարարությունը բժշկական սարքեր ձեռք բերելու նպատակով 2020 թվականի նոյեմբերի 4-ին կազմակերպել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով գնման ընթացակարգը: Հայտերի բացման օրը՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ին հայտ են ներկայացրել թվով 12 կազմակերպություն: Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 4-ի բացման և գնահատման նիստի արդյունքում (նիստի արձանագրությունը կցվում է) ընդունվել է որոշում 2-րդ չափաբաժնի մասով ամենացածր գնային առաջարկ ներկայացրած «Կանիֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանել վերոգրյալ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին: Կից Ձեզ եմ ներկայացնում «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրավերի պահանջները և «Կանիֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր միջնորդությունը գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցառումները իրականացնելու հարցում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կանիֆարմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «**Կանիֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 29.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Կանիֆարմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19764-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Թիվ 26/26-1/19764-2020 գրությամբ «Կանիֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված նիստի հետ կապված ուզում ենք հավաստիացնել, որ «Կանիֆարմ» ՍՊԸ-ն նպատակ չի ունեցել խոչընդոտելու գնումների բնականոն գործընթացը և մտադիր է եղել մատակարարել որակյալ ապրանք մատչելի գնով: «Կանիֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հավելված 1.1-ը լրացվել է համաձայն Nanjing Superstar Co., Ltd-ի կողմից Կանիֆարմ ՍՊԸ-ին ուղարկված տեղեկությունների համաձայն, որը բանակցությունների փուլում պարզվել է, որ մի կետով չի համապատասխանում պահանջված տեխնիկական բնութագրին:

Ուզում ենք տեղեկացնել, որ մեր կողմից առաջարկված սարքավորումը ավելի ֆունկցիոնալ է պահանջվածից, և զիջում է ոչ շատ կարևոր պարամետրով: Հաշվի չի առնվել, որ այն շատ ավելի կարևոր պարամետրերում առավել է:

Եվս մեկ անգամ հավաստիացնում ենք, որ նպատակ չենք ունեցել խոչընդոտելու գնումների բնականոն գործընթացը և խնդրում ենք չներառել «Կանիֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

հաշվի առնելով, որ «Կանիֆարմ» ՍՊԸ-ն իր 2 տարվա գործունեության ընթացքում կնքել է ավելի քան 40 պայմանագիր և բարեխղճորեն կատարել է դրանցով սահմանված պարտավորությունները և առաջին անգամ է թյուրիմացաբար հայտնվել նման իրավիճակում։»:

4. **<u>ՍՑ-LO</u>**-2020/299 **<u>ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 04.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կանիֆարմ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի 2-րդ չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 30.11.2020թ.-ին գնման ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է գրություն, առ այն, որ բանակցությունների օրը՝ 2-րդ չափաբաժնի համար, ցածր գնային առաջարկ ներկայացրած «Կանիֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներից մի քանիսը չեն համապատասխանում արտադրողի կայքում տեղադրած տվյալներին, սակայն տեխնիկական բնութագիր՝ թիվ 1.1 հավելվածը համապատասխանում էր հրավերի տեխնիկական բնութագրին: Նույն օրը գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել է և ուղարկվել հարցում «Կանիֆարմ» ՍՊԸ-ին առաջարկելով հավաստիացնել

հայտով ներկայացված տվյալների իսկությունը: Վերջինս մեկօրյա ժամկետում՝ 01.12.2020թ.-ին, ճշտել է արտադրող կազմակերպությունից պահանջվող տեղեկատվությունը, և նշելով, որ տեղի է ունեցել թյուրիմացություն և արտադրող կազմակերպությունը ներկայացրել է ճշտված չափանիշներ, ներկայացրել է նոր տեխնիկական բնութագիր, որը չի համապատասխանել հրավերի պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովը, որոշել է 2-րդ չափաբաժնի մասով մերժել «Կանիֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը:

v. ՀՀ առողջապահության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.12.2020թ.-ի թիվ ԱԹ/06.3/28777-2020 գրությամբ:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19764-2020 գրությամբ «Կանիֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված

մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 04.11.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2020/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կանիֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկած ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չափանիշներից մի քանիսը չեն համապատասխանել արտադրողի կայքում տեղադրած տվյալներին, սակայն տեխնիկական բնութագիր՝ թիվ 1.1 հավելվածը համապատասխանել է հրավերի տեխնիկական բնութագրին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել է և ուղարկվել հարցում «Կանիֆարմ» ՍՊԸ-ին առաջարկելով հավաստիացնել հայտով ներկայացված տվյալների իսկությունը: Վերջինս մեկօրյա ժամկետում՝ 01.12.2020թ.-ին, ճշտել է արտադրող կազմակերպությունից պահանջվող տեղեկատվությունը, և նշելով, որ տեղի է ունեցել թյուրիմացություն և արտադրող կազմակերպությունը ներկայացրել է ճշտված չափանիշներ, ներկայացրել է նոր տեխնիկական բնութագիր, որը չի համապատասխանել հրավերի պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովը, որոշել է 2-րդ չափաբաժնի մասով մերժել «Կանիֆարմ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը:

ՀՀ առողջապահության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.12.2020թ.-ի թիվ ԱԹ/06.3/28777-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 04.12.2020թ.-ին՝ Մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքով, սակայն ՀՀ առողջապահության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.12.2020թ.-ի թիվ ԱԹ/06.3/28777-2020 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝

մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19764-2020 գրությամբ «Կանիֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/299 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**